

ԿՈԴ

050.0108 Ն. 20.07.21

20 հուլիսի 2021 թվականի թիվ 108-Ն

**ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(2021 թվականի երկրորդ եռամսյակ)**

**Նպատակ ունենալով** ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը, **ղեկավարվելով** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ**

2021 թ. հուլիսի 22  
Երևան

**Մարտին Գալստյան**

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2021թ. երկրորդ եռամսյակ)

**2021 թվականի հուլիսի 20-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:**

Համաձայն [«Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման»](#) կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլային շեմի սահմանաչափը (այսուհետև նաև՝ կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿՀԲ)): Կենտրոնական բանկը ԿՀԲ-ն սահմանելիս առաջնորդվում է [«Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը»](#) փաստաթղթի դրույթներով, համաձայն որի, ԿՀԲ չափը սահմանելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար հիմք են հանդիսանում Բազելյան մեթոդաբանությամբ գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշի ճեղքվածքը, համակարգային ռիսկի զարգացումները բնութագրող ֆինանսական ցիկլի ինդեքսը և վաղ ահազանգման այլ ցուցանիշներ:

Կապիտալի հակացիկլիկ շեմի վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է հետևյալ փաստերի համապարփակ վերլուծությամբ.

1. 2021թ. առաջին եռամսյակի դրությամբ մասնավոր հատվածին տրամադրված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 73.57%<sup>1</sup>: Այս ցուցանիշի համար հաշվարկված ճեղքվածքը (վարկեր/ՀՆԱ-ի տարբերությունը իր երկարաժամկետ տրենդից) կազմել է մոտ 4.3 տոկոսային կետ, որը կրճատվել է նախորդ եռամսյակի համեմատ՝ պայմանավորված վարկային պորտֆելի աճի տեմպերի նվազմամբ<sup>2</sup>: Ինչպես նշվել էր նախորդող ԿՀԲ հիմնավորումներում, հաշվարկված վարկեր/ՀՆԱ դրական ճեղքվածքը պայմանավորված է դեռևս 2020թ. արձանագրված ՀՆԱ անկմամբ: Այս պայմաններում վարկավորման աճի տեմպերի կրճատմանը զուգընթաց վարկեր/ՀՆԱ դրական ճեղքվածքի նվազումը հավանական էր համարվում: ԿՀԲ որոշումների կայացման համար ԿԲ-ը դիտարկում է նաև վարկային ցիկլը բնութագրող այլ վաղ ահազանգման

<sup>1</sup> Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով):

<sup>2</sup> Բազելյան կոմիտեի մեթոդաբանության համաձայն, դրական ԿՀԲ սահմանելու համար որպես մեկնակետ առաջարկվում է կիրառել վարկեր/ՀՆԱ ցուցանիշի 2 տոկոսային կետ ճեղքվածքը:

ցուցանիշներ, ինչպիսիք են վարկավորման պաշարային և հոսքային ցուցանիշների աճի միտումները, Ֆինանսական ցիկլի ինդեքսը<sup>3</sup>, անշարժ գույքի շուկան բնութագրող ցուցանիշները և այլն:

2. 2021թ. առաջին եռամսյակի դրությամբ վարկային շուկայի միտումները բնութագրող Ֆինանսական ցիկլի ինդեքսը շարունակվել է գտնվել կրճատողական փուլում, որը դեռևս նախորդ տարվա ընթացքում ՀՀ տնտեսությունում արձանագրված շուկերի, և դրա արդյունքում ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից վարկավորման առավել պահպանողական վարքագծային դրսևորումների արդյունք է: Վարկավորման կրճատումը հատկապես զգալի է եղել սպառողական վարկերի մասով: Թեև առաջին եռամսյակում նոր տրամադրվող հիփոթեքային վարկերի տարեկան հոսքերի մասով ևս արձանագրվել է կրճատում, այդուհանդերձ այդ վարկերի պաշարային ցուցանիշի աճը պահպանվել է բարձր մակարդակում:
3. Հաշվի առնելով համաշխարհային տնտեսական ակտիվության վերականգնման սպասումները, ինչպես նաև ՀՀ-ում կորոնավիրուսի դեմ պատվաստման գործընթացի մեկնարկը՝ ՀՀ-ում տնտեսական ակտիվության տեմպերի վերականգնմանը և անորոշությունների կրճատմանը զուգընթաց ակնկալվում է, որ վարկավորման շուկայում պահպանողական դրսևորումները որոշակիորեն կմեղմվեն: Արդյունքում հավանական է համարվում, որ ֆինանսական ցիկլի ինդեքսը կարող է գտնվել ստորին շրջման կետի շրջակայքում և առաջիկա ժամանակահատվածներում տեղափոխվել վերականգնման փուլ (recovery phase):

Վերը նկարագրված միտումների և դրանց համապարփակ վերլուծության արդյունքում **Կենտրոնական բանկը առաջնահերթ է համարում բանկերի կողմից ՀՀ տնտեսության վարկավորման գործընթացների անընդհատության պահպանումը, և նպատակահարմար է գտնում կապիտալի հակացիկլիկ բուֆերի դրույքաչափը թողնել անփոփոխ՝ 0% մակարդակում:**

---

<sup>3</sup> Ֆինանսական ցիկլի ինդեքսի մեթոդաբանության հակիրճ նկարագրությունը տրված է 2020թ. տարեկան [Ֆինանսական կայունության հաշվետվության](#) Ներգիր 5.1-ում